



Ազդարարության Trumpet's Sound փող

49-րդ ՏԱՐԻ, ԱՄՏՐԱԼԻԱ
ՄԱՐՏ - ԱՊՐԻԼ 2018





Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցի ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION
PUBLISHED BY THE
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJJIAN
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057
email: pastor@armenianbrethren.org
URL: www.acmaust.org

«ԱԶԳԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ» երկամսյա թերթը Սիդնեյի Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցու հրատարակությունն է: Պատասխանատու խմբագիր՝ հովիվ Հրաչ Գույունյան:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Ցանկացողները կարող են դիմել նշված հասցեով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հնազանդվել Աստծուն Հովիվ՝ Հրաչ Գույունյան

Որտե՞ղ կարելի է հավատացյալ քրիստոնյաներ չգտնել . . Քաղված

Հիսուսը երևում է Իր աշակերտներին Դոն Սթորմըր

Հավատքի և մշակույթի զուգորդությունը մեր կյանքում . . . Դոկտ. Կարպիս Տեր Եղիայան

Հովհաննեսի նամակները (3) ՉՄԵԿ պանորամա

Մենք մենակ չենք. Հովիվ՝ Հովսեփ Հովսեփյան

Աճել և զարգանալ մեր կյանքում և ծառայության մեջ Մանկանց ավետ. ընկ.

Ստեղծված ենք Նրա հաճության համար (2) Հովիվ՝ Րաֆֆի Չափարյան

Ֆինանսական շիտակություն Դոկտ. Չեյով Բասսարա

Տե՛ս՝ որքան շատ քեզ սիրեցի Քաղված

Հնազանդվել Աստծուն

Բ ոլոր մարդկանց համար ամենադժվար բաներից մեկը հնազանդ լինել սովորելն է: Հնազանդությունը զավակների, դեռահասների, չափահասների, նախագահների և թագավորների համար է: Բոլորս հնազանդվելու մեջ դժվարություն ունենք:

Հիշում եմ, երբ որդիս ընդամենը 10 տարեկան էր, ինձ հարցրեց, թե մինչև ո՞ր տարիքը պետք է հնազանդ լինի ինձ: Ես նրան պատմեցի, թե Իսահակը մորուքով չափահաս տղամարդ էր, երբ հնազանդվեց իր հորը և ընդունեց ամուսնության համար հայրական երկրից կին առնելու հոր առաջարկը: Նրա անմիջական արձագանքը հետևյալն էր. ԱՄՈՒՄՆԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԵԳԻՊՏՈՍ ՉԵՄ ԳՆԱԼՈՒ:

«Զավակներ, ձեր ծնողներին հնազանդ եղեք Տիրոջով, որովհետև դա է ճիշտը. «Պատվիր քո հորը և մորը», սա առաջին պատվիրանն է, որ խոստում ունի՝ «որպեսզի լավ լինի քեզ համար, և երկար կյանք ունենաս երկրի վրա»» (Եփես. 6:1-3):

Անառակ որդին չհնազանդվեց իր հորը, ժառանգության իր բաժինը պահանջեց, որպեսզի ծախսեր, ինչպես ուզեր, բայց երբ ամեն ինչ կորցրեց, շուտով վերադարձավ, ապաշխարությամբ զոջաց իր անհնազանդության համար և հորը խնդրեց իրեն ընդունել որպես ծառա:

«Հայրեր, ձեր զավակներին բարկության մի՛ դրդեք, այլ նրանց մեծացրեք Տիրոջ խրատով և ուսմունքով» (Եփես. 6:4):

Հովնանը ճանաչված է որպես Աստծուն չհնազանդվող միակ մարգարե: Արդյոք կուզեի՞ք ճանաչվել որպես Աստծուն չհնազանդվող միակ անձնավորություն:

Հովնանը շատ լավ գիտեր, որ Նինվեն չար մարդկանց քաղաք էր, և բնակիչները արժանի չէին Աստծո ողորմությանը: Հովնանն ուզում էր Նինվեն կործանված տեսնել, բայց Աստված փրկության ծրագիր ուներ: Հովնանը զնեց տոմսը, նավ բարձրացավ ու փախավ Աստծո ներկայությունից, բայց Տերը մեծ ձկանը հրամայեց, որ նրան կուլ տա: Երեք օր Հովնանը մնաց խավարի մեջ: Երեք օրվա ընթացքում նա

մերժեց Աստծո կամքը կատարել: Երեք օր նրա սիրտը կարծրացած էր: Վերջապես խելքի եկավ և ապաշխարեց:

Ամպերը հնազանդվեցին, փոթորիկները հնազանդվեցին, ալիքները հնազանդվեցին, նավաստիները հնազանդվեցին, մեծ ձուկը հնազանդվեց, բայց Հովնանը՝ ոչ:

Կարծում եմ, որ յուրաքանչյուրիս կյանքը ինչ-որ ձևով նման է Հովնանի փորձառությանը: Աստված մեզ կոչ է անում, բայց մենք ապրստամբում ենք: Մենք Աստծուց բացի ամեն բանի մեջ կյանքի իմաստ ենք փնտրում, մինչև որ հասնում ենք մի կետի, որտեղ վերջապես գիտակցում ենք մեր անկարողությունը և գալիս ենք այն եզրակացության, որ փրկությունը Տիրոջից է:

Եթե տակավին Հովնանի գիրքը չեք կարդացել, ապա քաջալերում եմ կարդալու այն: Այնտեղ շուտով կտեսնեք, թե որքան կարեկցող ու սիրող է մեր Աստվածը. Նա բոլորի վրա բարձրյալ է: Կտեսնեք, թե որքան պետք է սովորենք հնազանդ լինել Աստծուն, Նրա ճամփաներին և ուսուցումներին:

Սամուելն ասել է. «Մի՞թե Տերն ավելի հաճույք է ստանում ողջակեզներից ու զոհերից, քան Տիրոջ ձայնին հնազանդվելուց: Ահա, հնազանդությունը զոհաբերությունից ավելի լավ է, ու անսալը՝ խոյերի ճարպից» (Ա Թագ. 15:22):

Հնազանդ կլինե՞ս Նրան այսօր՝ փրկությունը քոնը կլինի:

Հ. Գ.



«Այն, որ կենդանի բջջի մեջ դրված ծրագիրը կարող էր զարգանալ պատահականորեն, ըստ էության, անհեթեթություն է: Ես այն կարծիքին եմ, որ կենսաբանները մեծամասամբ իրենց հոգու խորքում հասկանում են Աստվածաշնչի ճշմարտությունը, բայց նրանք այնքան են վախեցած հեղաշրջող հետևանքներից, որ պատրաստ են ընդունել վարքի ցանկացած դրսևորում, միայն թե հեռու մնան դրանցից»:

Հոլլ Ֆրեդ (աստղաֆիզիկոս, փիլիսոփա)

Որտե՞ղ կարելի է հավատացյալ քրիստոնյաներ չգտնել

Մի անգամ Շվեյցարիայում հավատացյալ մոր երիտասարդ զավակն արտահայտվում էր, թե հիվանդ լինելու չափ ձանձրացել է հավատացյալների ներկայությունից ու չի ուզում նրանց հետ խոսել, անգամ նրանց երեսը տեսնել: Ուստի նա ինքնիրեն որոշեց, որ գնացքով մեկնի լճերից մեկի եզերքում գտնվող ամառի տեղ, ուր հավատացյալներ չկան:

Գնացքի տոմս գնելով՝ իր հատուկ տեղը գրավեց ու սկսեց ճամփորդել՝ կարծելով, թե իր իմացած հավատացյալների խմբի երեսը կսկսեց անգամ չի տեսնի: Սակայն հենց նստեց ու գնացքը սկսեց ընթանալ, տեսավ, որ իր կողքը նստող երկու ճամփորդները շատ եռանդուն խոսակցություն են վարում, և խոսակցության թեման Սուրբ Գրքի ճշմարտությունների շուրջ է զարգանում: Երիտասարդն ինքնիրեն ասաց. «Այս տեղն իմը չէ, ես այստեղ չեմ կարող նստել ու նրանց խոսակցությունները ակամայից ունկնդրել»: Եվ երբ հասան հաջորդ կայարան, նա շուտով փոխեց իր տեղը ու կողքի կառքում տեղ գրավեց, ուր մի քանի տարիքավոր կանայք միասին ճամփորդում էին: Երբ երիտասարդն ականջ դրեց նրանց խոսակցություններին, տեսավ, որ նրանք Քրիստոսի երկրորդ գալուստի մասին են խոսում: Նա շատ նեղվեց, քանի որ դարձյալ հավատացյալ կանանց շրջապատում էր, որոնց ներկայությունից փախչում էր: Հենց հաջորդ կայարանը հասան, տեսավ, որ լճակի եզերքին մի նավ կա, ուր մի խումբ երիտասարդներ ու երիտասարդուհիներ էին հավաքված, որ պատրաստվում էին նավով ճամփորդելու: «Այս անգամ, - մտածեց նա, - կարող եմ ազատվել այս հավատացյալների երեսից: Նա մեկ տոմս գնեց և միացավ այս երիտասարդների խմբին: Բայց երբ նավը ճանապարհ դուրս եկավ, նա հասկացավ, որ նրանք նույնպես հավատացյալ երիտասարդների խումբ են, որը շրջագայության է գնում, և որոնց հոգևոր ուրախ խոսակցություններն ու երգերը ինքը լսել չէր ուզում:

Երիտասարդը, մոտենալով նավապետին, ասաց.

- Բարի՛ լույս, պարոն նավապետ: Ասե՛ք ինձ, թե ո՞ւր գնամ, որ այս հավատացյալ քրիստոնյա կոչվածների երեսից ազատվեմ ու այլևս չտեսնեմ նրանց:

Նավապետը, որ ինքն էլ աշխարհիկ մարդ էր, մեկ վայրկյան երիտասարդի երեսին նայելուց հետո ծիծաղով ասաց.

- Դժոխք:

Այս կտրուկ, բայց ճիշտ պատասխանը հասավ և սրի պես խոցեց երիտասարդի սիրտը. իսկապես, միայն դժոխքում հավատացյալ քրիստոնյաներ չկան: Ուստի եթե ուզում է նրանց չտեսնել, պետք է անպայման դժոխք գնա: Նույն պահին նավապետը ինքն էլ ազդվեց իր տված պատասխանից: Ի վերջո, երկուսն էլ, դարձի գալով, իրական քրիստոնյաներ եղան:

Ո՛վ երիտասարդ ու պատանի, դու ո՞ւր ես ուզում գնալ՝ դժո՞խք, թե՞ Երկինք:

Քաղված՝ «Մարանաթա» ամսագրից

Միշտ իմ սիրելի աղոթքն է եղել Դամիելի փառաբանությունն առ Աստված (Դան. 2:20-23): Ես այդ աղոթքն արտագրել և փակցրել եմ իմ գրասեղանի դիմաց, որպեսզի չհպարտանամ այն ամենով, ինչ ունեմ: Ահա այդ աղոթքը.

«Օրհնյալ լինի Աստծո անունը հավիտենից մինչև հավիտյան, որովհետև իմաստությունը և գորությունը Նրանն է: Նա է ժամանակները և ժամերը փոխողը, թագավորներ իջեցնողը և թագավորներ դնողը, Նա է տալիս իմաստություն իմաստուններին և հանճար գիտնականներին: Նա է խոր և ծածուկ բաները հայտնողը: Նա գիտի մութի մեջ եղածը, և Լույսը Նրա հետ է բնակում: Քեզ, իմ հայրերի Աստված, օրհնում և փառաբանում եմ ես, որ իմաստություն և գորություն տվեցիր ինձ, և հիմա ինձ հասկացրիր ինչ որ խնդրել էի Քեզանից, քանի որ Դու ցույց տվեցիր ինձ Քո գործերը»:

Հենրի Ջոզեֆ

Հիսուսը երևում է Իր աշակերտներին

Հովհաննես 20:19-23

Երեկոյան, երբ Տերը հայտնվեց նրանց, տասներկու աշակերտներին տասը ներկա էին: Տեր Հիսուսը մտավ այն սենյակը, որտեղ նրանք էին: Նրա հարուցյալ մարմինը ենթակա չէ մարդկային մարմնի սահմանափակումներին: Նա կարող է ազատորեն անցնել փակ դռների միջով: Հիսուսը կանգնեց նրանց մեջտեղում և ասաց. «Խաղաղություն ձեզ»: Եբրայերեն ողջույնի այս ձևն իր մեջ ավելի մեծ իմաստ է ներառում, քան պարզապես սթրեսից կամ բախումից հեռու մնալու ցանկությունն է: Լայն իմաստով, այն բարօրության և հանգստության մաղթանք է նշանակում: Քանի որ Տերը հարություն առավ, վերջապես Իրեն հետևող տղամարդիկ և կանայք կարող են իրական խաղաղություն ունենալ իրենց սրտերում:

Այնուհետև Տերն Իր աշակերտներին ցույց տվեց Իր ձեռքերն ու խոցված կողը: Սա հաստատապես ապացուցում էր, որ Ինքը հարություն էր առել դա վկայում էր այն մասին, որ նրանց առջև կանգնածը նույն Անձն էր, որին հետևել էին Գալիլիայից մինչև Երուսաղեմ: Այլևս լրացուցիչ փաստերի կարիք չկար: Աշակերտները ուրախացան, երբ տեսան Տիրոջը:

Նրանք հանձնարարություն ունեին: Նախորդ երեք տարիների ընթացքում նրանք սովորել էին Նրանից, ուստի այժմ պետք է դուրս գային՝ Իր մասին վկայելու: Նա ուղարկեց նրանց, ինչպես Հայրը ուղարկել էր Իրեն: Ի՞նչ նկատի ունեւ Տերը: Կան որոշ տարբերություններ Տիրոջ ուղարկված լինելու և աշակերտների ուղարկված լինելու միջև: Տերն ուղարկված էր փրկագործությունը կատարելու համար: Նա եկավ որպես Աստծո Գառ, որպեսզի վերցնի մեր մեղքերը: Մենք երբեք չենք կարող անել դա: Այդ գործը կատարված է մեկ անգամ, և այն ամբողջական ու ավարտուն է բոլոր դարերի համար:

Բայց կան շատ որոշակի մանություններ մեր և Հոր կողմից Հիսուսի ուղարկված լինելու միջև: Նա ուղարկված էր՝ Աստծո կամքը կա-

տարելու: Նա եկավ առանց դժգոհելու և կատարեց Աստծո կամքը: Հորը հնազանդվելը նաև մեր պարտականությունն է: Տեր Հիսուսը եկավ այնպիսի աշխարհ, որտեղ ատում են Աստծուն, հետևաբար Նա արհամարհված էր մարդկանց կողմից: Եթե ուղարկված ենք այնպես, ինչպես Որդին էր ուղարկված, ապա մենք նույնպես կարող ենք ակնկալել, որ մերժվելու ենք Աստծուն ատող աշխարհում: Տերն ասել է, որ եթե աշխարհն Իրեն ատեց, մեզ էլ է ատելու: Մենք ուղարկված ենք Քրիստոսի անունով նախատինք կրելու:

Այնուհետև Տերն աշակերտների վրա փչեց և ասաց. «Առե՛ք Սուրբ Հոգին»: Ոմանք կարծում են, թե այս խոսքերի և Հոգեգալուստի միջև տարածայնություն կա, չէ՞ որ Հոգեգալուստը տեղի ունեցաւ հիսուն օր անց: Արդյո՞ք Սուրբ Հոգին երկու անգամ եկավ: Ո՛չ: Ավելի ճիշտ է մտածել, որ Տերն Իր այս քայլով նախապատրաստեց Իր աշակերտներին Պենտեկոստեի օրվա Սուրբ Հոգու գալուստի համար: Իրականում սա խոստում էր Սուրբ Հոգու գալուստի վերաբերյալ, ով գորացնելու էր նրանց Աստծո ծառայության համար:

Այժմ նրանք ունեին Ավետարանը քարոզելու պարտականությունը: Բայց ի՞նչ է նշանակում Հիսուսի «ում մեղքերը դուք ներեք՝ ներված կլինեն նրանց, և ում մեղքերը դուք պահեք, կպահվեն» խոսքը:

Հստակ է, որ այն չի նշանակում, թե երկրի վրա որևէ մեկը մեղքերը ներելու իշխանություն ունի: Սա միայն Աստծո առանձնաշնորհումն է: Մենք նաև չենք կարող ներումը հետ պահել այն մարդկանցից, ովքեր ճշմարտապես ապաշխարում են: Մեղքեր թողնելը կամ կապելը Ավետարանի քարոզչության ազդեցությունն է: Երբ քարոզում ենք Ավետարանը, ոմանք հավատքով արձագանքում են և ազատվում են իրենց մեղքերից, ոմանք մերժում են հավատքը և մնում իրենց մեղքերի մեջ: Մեղքերը թողնելը կամ կապելը Աստծո պատասխանատվության մեջ է մտնում, բայց մենք Աստծո Խոսքի հեղինակության լույսի ներքո զղջացող մեղավորին կարող ենք ասել, որ իր մեղքերը ներված են: Մենք նաև անապաշխար մարդուն կարող ենք ասել, որ նա տակավին իր մեղքերի մեջ է:

Հիսուսը հայտնվում է Թովմասին (24-29)

Թովմասը բացակա էր Տիրոջ առաջին այցի ժամանակ, բայց երկրորդին ներկա էր:

Թովմասի մասին մեզ շատ բան հայտնի չէ: Հովհ. 11:16-ում «մենք էլ գնանք, որպեսզի մենք էլ Իր հետ մեռնենք» խոսքից կարելի է եզրակացնել, որ նա հռոռետես աշակերտ էր: Նա էր, ով Հովհ. 14:5-ում Տիրոջն ասել էր. «Տե՛ր, մենք չգիտենք, թե ուր ես գնում. և ինչպե՞ս կարող ենք ճանապարհին իմանալ»:

Հիսուսի առաջին այցից հետո Թովմասի արտահայտած խոսքերը հիմք հանդիսացան, որ այսուհետ նա կոչվի կասկածող աշակերտ: Մենք կարող ենք հարց տալ, թե ինչու նա շաբաթվա առաջին օրը մյուս աշակերտների հետ չէր, երբ Տերը հայտնվեց նրանց: Արդյոք վախենո՞ւմ էր, որ կրոնական առաջնորդները կսպանեին իրեն: Ի՞նչ պատահեց այն անձին, ով ասել էր. «Մենք էլ գնանք, որպեսզի մենք էլ Իր հետ մեռնենք»: Արդյոք նա ավելի՞ էր հուսահատված, քան մյուսները: Մենք չգիտենք: Նրանք նույնպես հուսահատված ու շփոթված էին: Էմմաուսի ճանապարհով անցնող երկու աշակերտները նույնպես խորապես մտահոգված էին, բայց սա պատճառ չհանդիսացավ, որ նրանք հարության օրը աշակերտների հետ չլինեին: Ինչ էլ լիներ պատճառը, Թովմասը այնտեղ չէր, երբ Տերը հայտնվեց մյուս աշակերտներին, հետևաբար նա մեկ շաբաթ կս մնաց իր անհավատության մեջ:

Այդ շաբաթվա ընթացքում աշակերտները, տեսնելով Թովմասին, փոխանցեցին ուրախալի լուրը. «Մենք տեսանք Տերը»: Նա անհավատությանը արձագանքեց: Թովմասն Էմմաուսի երկու ճանապարհորդների նման անշուշտ լսել էր, որ կանանցից ոմանք պնդում էին, թե տեսել են Տիրոջը: Բայց Թովմասը որոշակի ապացույցներ էր պահանջում: Եթե Նրա ձեռքերի վրա բևեռների նշանը չտեսներ, մատը բևեռների տեղը չխոթեր և իր ձեռքը Նրա կողը չխոթեր, չէր հավատա: Իրականում Թովմասը շատ բացասական էր իր պնդման մեջ. ես երբեք չեմ հավատա:

Հաջորդ կիրակի նա մյուս աշակերտների հետ էր: Տերը դարձյալ մտավ փակ սենյակ և ողջունեց Իր աշակերտներին: Այնուհետև դի-

մեց Թովմասին՝ հաստատ իմանալով, թե նա ինչ էր ասել շաբաթվա ընթացքում: Եվ որպեսզի նա կարողանար հավատալ, հրավիրեց նրան՝ անելու այն, ինչ ասել էր: Այս դեպքով Տերը ցույց տվեց Իր Աստվածությունը: Այդ մեկ շաբաթվա ընթացքում որևէ մեկը Տիրոջը չէր տեսել, որպեսզի հաղորդեր Նրան Թովմասի խոսքերը: Նա գիտեր առանց որևէ մեկի ասելու:

Մեզ չի ասվում, թե արդյոք Թովմասն ընդունե՞ց Տիրոջ՝ վերքերին դիպչելու հրավերը, բայց շատ անհավանական է, որ նա այդպես վարվեր: Տերը գիտեր նրա սրտի խորհուրդները և պատրաստ էր թույլ տալու նրան դիպչել Իր վերքերին: Սա բավարար էր, որ Թովմասը կարողանար հավատալ:

Թովմասը ճանաչեց, թե ով է Հիսուսը: Իր «Իմ Տերս և Իմ Աստվածս» բացականչությունը ցույց տվեց, որ նա հավատաց, որ Հիսուսն Աստված է: Հրեաներն Աստծո երկրպագության ժամանակ օգտագործում էին այդ երկու տիտղոսները: Թովմասի բոլոր կասկածները հավիտյանս հեռացան: Նա տեսավ Տիրոջը և համոզվեց, որ Նա Աստված է և ողջ է:

Երբ Սիմոն Պետրոսն արտահայտեց հավատքի դավանության՝ «Դու Քրիստոսն ես՝ Կենդանի Աստծո Որդին» խոսքերը, Տերը նրան ասաց. «Օրհնյալ ես դու, Սիմոն՝ Հովմանի որդի, քանի որ ո՛չ թե մարմինն ու արյունը հայտնեցին քեզ, այլ՝ Իմ Հայրը, որ երկնքում է»: Թովմասին նման խոսք չասվեց, բայց անկասկած նա նույնպես օրհնյալ էր, քանի որ դավանեց, թե Հիսուսն իր Տերն ու Աստվածն է: Փոխարենը՝ օրհնություն կա բոլոր նրանց համար, ովքեր, ի տարբերություն Թովմասի, Տիրոջը ֆիզիկապես չտեսած՝ հավատալու են, որ Նա Աստծո Որդին է, իրենց Տերն ու Աստվածն է:

Ի՞նչ ենք սովորում Թովմասի կյանքի այս դեպքից: Քրիստոնեական կյանքը հավատքի կյանք է: Մենք քրիստոնեական կյանքը հավատքով ենք սկսում և շարունակում: Եբրայեցիներին 11-ն ասում է, որ առանց հավատքի անհնար է Աստծուն հաճելի լինել: Մենք պետք է շարունակաբար հավատք ցուցաբերենք. մենք ամեն ժամանակ հավատում ենք Աստծուն:

Դոն Սթորմըր

Հավատքի և մշակույթի զուգորդությունը մեր կյանքում

Քաղաքակիրթ աշխարհի պատմության մեջ ազգեր և ժողովուրդներ գոյություն են ունեցել շնորհիվ իրենց մշակույթի, ինչպես նաև ազգային արմատների: Սակայն ազգերի գոյատևումը երաշխավորված է միայն ժողովուրդների ունեցած հավատքի արմատներով: Այս իրականությունը հստակ դրսևորված է մեր հայ ազգի կյանքում, քանի որ մեր նախահայրերը գեղեցիկ կերպով շողկապել են մեր հավատքն ու մշակույթը, մեր հոգևոր և ազգային արմատները ու 16 դար առաջ՝ 5-րդ դարում, կերտել Ոսկեդարը, որը կերտեց մեր ժողովրդի նկարագիրը ու փայլուն ապագայի հեռանկար ապահովեց:

Այսօր մենք այս համոզիչ իրականության ականատեսներն ենք: Գերհզոր Խորհրդային միությունը հանկարծ տապալվեց և կորցրեց իր միջազգային հեղինակությունը: Անաստվածության և անհավատության մայրաքաղաքը՝ Մոսկվան, վերածվեց սգի և քայքայման որջի: Մշակութային հարստություններով նշանավոր այդ երկիրը չկարողացավ գոյատևել առանց հավատքի: Եվ այսօր եկեղեցիները, որոնք վերջին 70 տարիներին թատրոնների և թանգարանների էին վերածվել, վերաբացվել են ու ծառայում են որպես հավատքի կենտրոններ:

Մեր նախահայրերը շնորհիվ իրենց զորավոր (հոգևոր և ազգային) արմատների հսկայական դրամազլուխ ստեղծեցին մեր ժողովրդի համար: Արդյոք կարողացե՞լ ենք այդ դրամազլուխն ավելի հարստացնել: Եթե այսօր համեմատելու լինենք, արդյոք ուզում ենք հպարտանալ միայն անցյալով, թե՞ նաև ներկայի մեր վիճակով:

Ներկայիս պարզվող վիճակը հստակ ցույց է տալիս, որ սկսել ենք հրաժեշտ տալ մեր արմատներին՝ ջանալով փոխադրել դրանք գեղեցիկ ծաղկամանների մեջ, որոնց ջուրը չի կարող սնունդ տալ ու հավերժացնել մեր արմատները: Մեր երաժշտությունը, գրականությունը, ճարտարապետությունը, դպրոցներն ու եկեղեցիները կդադարեցնեն իրենց գոյությունը, երբ անջատվեն իրենց հավատքից ու ազգային արժեքներից:

Ներկայում մեր հայրեիները կերտում է իր անկախությունը: Գժվարություններն անշուշտ ակնկալելի են՝ քաղաքական, տնտեսական, ընկերային և այլ ոլորտներում: Հավատքով կերտված մեր հայրեիները կարող է հաղթահարել բոլոր դժվարությունները, երբ Աստծո ապավինենք: Աստվածաշունչը հստակորեն ասում է. «Եթե Տերը չշինի տունը, գուր են աշխատում այն շինողները...» (Մադ. 127:1):

Եթե վատահենք միայն մեր մտքին, ձեռքերին կամ նյութական կարողությանը, կձախողվենք հայրեիք վերակերտելու մեր սրբազան առաքելության մեջ:

Աստվածաշունչում շատ գեղեցիկ օրինակներ կան հավատքի մասին.

1. Գործք 2:14-18. հավատքը վերածելու ենք գործի, արդյունքի:
2. Եբր. 11:33-34. հավատքն է հաղթությունը: Հավատքի գործությունը հրաշքներ կարող է գործել՝ բանակներ ցրելով, առյուծների բերաններ փակելով:
3. Գուկ. 17:6, Մատթ. 21:21. հավատքը տալիս է նույնիսկ լեռներ տեղաշարժելու կարողությունը:

Եթե մենք ուզում ենք մեր ազգային, ընտանեկան և անհատական կյանքը կանգուն պահել, միայն մեկ սյուն կարող է երաշխավորել այդ բոլորը, և դա հավատքի սյունն է, որ հիմնված է Տեր Հիսուս Քրիստոսի վրա:

Գուկո. Կարպիս Տեր Եղիայան
Քաղված՝ «Հատընտիր հոգևոր պատգամներ» գրքից



«Ինչպես երեխան է վերաբերվում հոր կանչին, փեսան՝ իր հարսնացուի ձայնին, այնպես էլ մենք պետք է լսենք Աստծո ձայնը Սուրբ Գրքում և ընկալենք նրա մեջ հնչող հավիտենական հնչյունները»:

Հերդեր Յոհան Գոթֆրիդ

Հովհաննեսի նամակները (3)

2.6 ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՍԻՐՈ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆԸ (4:7-21)

Այս բաժինը ներկայացնում է Աստծո սերն իր ամբողջ ճոխությամբ: Այն ցուցադրվում է տարբեր ձևերով.

1. «Աստված Իր միածին Որդուն ուղարկեց աշխարհ, որ Նրա միջոցով ապրենք» (հմր 9):
2. «... Նա՛ սիրեց մեզ և Իր Որդուն ուղարկեց իբրև մեր մեղքերին քավություն» (հմր 10):
3. «... Հայրը Իր Որդուն ուղարկեց աշխարհի Փրկիչը լինելու» (հմր 14):

Այս բոլոր արտահայտություններն Աստծո սիրո՝ անցյալի դրսևորումներն են, երբ Հիսուսը տառապեց մեր փոխարեն, որպեսզի կարողանանք փրկվել: Այնուհետև 12-16 համարներում տեսնում ենք Աստծո սիրո՝ ներկայի դրսևորումները բոլոր նրանցում, ովքեր հավատում են, իսկ 17-րդ համարում տեսնում ենք Աստծո սիրո՝ ապագայի դրսևորումը մեր մեջ. այն մեզ համարձակություն է տալու դատաստանի օրը:

Աստված ճշմարիտ սիրո աղբյուրն է, ուստի Հովհաննեսը երկու անգամ արձանագրում է, թե «Աստված սեր է» (Ա Հովհ. 4:8, 16): Սիրելը Աստծո բնույթն է, բայց մենք կարող ենք սիրել միայն այն ժամանակ, երբ հասկանում ենք Աստծո սերը. «Մենք սիրում ենք Նրան, քանի որ նախ Նա՛ մեզ սիրեց» (Ա Հովհ. 4:19): Անհնար է սիրել Աստծուն և ատել եղբորը: Իրականում Աստված պատվիրեց մեզ. «Ով սիրում է Աստծուն, իր եղբորն էլ պետք է սիրի» (Ա Հովհ. 4:20-21):

Հովհաննեսն արդեն արձանագրել էր Տեր Հիսուսի խոսքերն այն մասին, որ պետք է սիրենք միմյանց (Հովհ. 13:34-35): Այժմ այս նամակում նա կրկին ու կրկին հորդորում է մեզ նույնը անել (Ա Հովհ. 3:11, 23, 4:7, 11, 12): Ինչքա՛ն կարևոր է, որ ականջ դնենք այս հորդորին:

Տեր Հիսուսի տիտղոսներից մեկը «Աստծո Որդին» է, որն այս նամակում օգտագործվել է յոթ անգամ (հինգ անգամ 5-րդ գլխում): Նա Որդին է, և Նա Աստված է (Եբր. 1:8, Ա Հովհ. 5:20), և որպես Որդի՝ Նա երբեք սկիզբ չի ունեցել (Հովհ. 17:5, Ա Հովհ. 1:2): Մեր ուսումնասիրած հատվածում Հովհաննեսն ասում է. «Ով խոստովանում է, թե Հիսուսը Աստծո Որդին է, Աստված բնակվում է Նրա մեջ, և ինքն էլ՝ Աստծո մեջ» (Ա Հովհ. 4:15): Սա մեզ հիշեցնում է Պետրոսի խոստովանությունը. «Դու Քրիստոսն ես՝ Կենդանի Աստծո Որդին» (Մատթ. 16:16, հմմտ. Ա Հովհ. 5:1): Երբ նման հայտարարության ամբողջական ճշմարտությունը բացահայտվում է մեր առաջ, դա մեզ առաջնորդում է մեր երկրպագությունն ու հավատարմությունը Քրիստոսին մվիրելուն: Այնժամ մեր մասին կարելի է ասել, որ Աստված բնակվում է մեր մեջ և մենք՝ Աստծո մեջ (հմմտ. Հովհ. 14:23):

Հովհաննեսն այժմ մեր ուշադրությունը կենտրոնացնում է Աստծո սիրո հերթական հետևանքի՝ պատվիրանները կատարելու կամ հնազանդվելու վրա (Ա Հովհ. 5:2-3): Տեր Հիսուսը նույնը սովորեցրեց. «Եթե Ինձ սիրում եք, Իմ պատվիրանները պահեցե՛ք» (Հովհ. 14:15): Դա կարող է ժամանակ առ ժամանակ գայթակղեցնել ոմանց, նույնիսկ բաժանումներ առաջացնել, բայց մեր առաջնահերթությունը պետք է ուղղված լինի դեպի Տերը: Եվ անկախ հանգամանքներից՝ մենք միշտ պետք է ջանք թափենք մեր եղբայրներին սիրելու մեջ (հմմտ. Եփես. 4:2-3):

2.7 ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ (5:1-12)

Նրանք, ովքեր Աստծուց են ծնվել, սիրում են Նրան և պահում են Նրա պատվիրանները, ինչպես նաև սիրում են իրենց եղբայրներին Քրիստոսում և իրենց հավատքի միջոցով հաղթահարում են աշխարհին: Այստեղ նույնպես Հովհաննեսը խոսում է աշխարհի համակարգի մասին, որը բնութագրվում է Աստծուց և Նրա ճշմարտությունից մեզ հեռացնող, ժամանակավոր բաներով զբաղեցնող, և միայն մարմնին ու շնչին հոգ տանելու դրդող հատկություններով և չի թողնում մտածել հոգևոր բաների շուրջ, որոնք ներկայացված են Աստծո Խոսքում: Բայց Աստծուց ծնվածներն իրենց հավատքի շնորհիվ հաղ-

թանակ ունեն, որը հնարավորություն է տալիս նրանց երկրային բաներից վեր բարձրանալու: Հաղթողը նա է, ով հավատում է, որ Հիսուսը Աստծո Որդին է (Ա Հովհ. 5:4-5, հմմտ. Փիլ. 3:19-20 և Կող. 3:1-2):

Օրենքի համաձայն՝ վկայությունը երկու կամ երեք վկաների բերանով էր հաստատվում (Բ Օր. 19:15): Այնպես որ Հիսուսի՝ Աստծո Որդի լինելը կասկածի տակ չդնելու համար Հովհաննեսը բերում է երեք վկա՝ Հոգին, ջուրը և արյունը (Ա Հովհ. 5:7-8): Սա հավանաբար հրատակ հասկացվում և ընդունվում էր որպես վերջնական խոսք Հովհաննեսի ժամանակակիցների կողմից: Բայց մեր օրերում առնվազն վեց մեկնաբանություն կա, որոնք բացատրում են, թե Հովհաննեսը ինչ նկատի ուներ արյուն և ջուր ասելով: Այստեղ ներկայացնում ենք այն, որը, կարծում ենք, ամենաընդունելի մեկնաբանությունն է:

Երբ Հիսուսը մկրտության ջրից դուրս եկավ, Հովհաննես Սկրտիչը տեսավ, որ Հոգին իջնում է երկնքից մարմնավոր տեսքով՝ աղավառու կերպարանքով, և մնում է Նրա վրա՝ ցույց տալով Հովհաննեսին, որ Հիսուսը Աստծո Որդին է: Միևնույն ժամանակ երկնքից ձայն լսվեց. «Սա է Իմ սիրելի Որդին, որին հավանեցի» (Մատթ. 3:16-17, Մարկ. 1:10-11, Դուկ. 3:22, Հովհ. 1:32-34): Հովհաննես առաքյալը պատմում է մեզ, որ Հովհաննես Սկրտիչն ասել է. «Ես տեսա և վկայեցի, թե՛ «Սա է Աստծո Որդին»», և Ավետարանի բոլոր չորս գրողները արձանագրում են երկնքից լսված խոսքերը. «Սա է իմ Որդին...»: Չպետք է մտածենք, ինչպես գնոստիկները (տե՛ս նախորդ սերտոդրությունները), որ միայն մկրտության ժամանակ էր, որ Հիսուսին տրվել էր աստվածության՝ Աստծո Որդի տիտղոսը, քանի որ Նա միշտ եղել է Որդի, նույնիսկ անցյալ հավիտենականության ժամանակ (հմմտ. Հովհ. 17:5, Առակ. 30:4):

Մենք մտածում ենք, որ մյուս երկու վկաները՝ ջուրը և արյունը, վերաբերում են այն բանին, ինչին Հովհաննեսն ակամատես եղավ, երբ զինվորներից մեկը Հիսուսի մահանալուց հետո նիզակով խոցեց Նրա կողը և «անմիջապես արյուն և ջուր դուրս եկավ» (Հովհ. 19:34): Մրանք խորհրդանշում էին խաչի վրա Քրիստոսի սրբագործման և վերականգնման աշխատանքը, գործ, որը կարող էր իրականացվել միայն աստվածային կարողությամբ: Նույնիսկ հարյուրապետը և

մյուսները, որ կանգնած էին իր մոտ, բացականչեցին. «Ճշմարիտ է, որ Նա Աստծո Որդին էր» (Մատթ. 27:54): Պողոսը մեզ ասում է, որ «Աստված էր, որ Քրիստոսի մեջ աշխարհը (մարդկությանը) հաշտեցրեց Իր հետ, նրանց հանցանքները չվերագրելով նրանց և մեզ հանձնարարեց հաշտության պատգամը» (2 Կորնթ. 5:19):

Անհրաժեշտ է, որ բոլորս հավատանք Աստծո՝ Իր Որդու մասին արած վկայությանը: Նրանք, ովքեր հավատում են, Աստծո Հոգին, ով Որդու մասին ճշմարտությունն է վկայում, բնակվում է նրանց մեջ: Նրանք, ովքեր չեն հավատում, Աստծուն ստախոս են հանում: Պողոսը գրեց. «Թող Աստված ճշմարիտ լինի, իսկ ամեն մարդ՝ սուտ» (Հռոմ. 3:4): Եվ երբ հավատում ենք, Աստծո՝ Իր Որդու մասին վկայածին, ստանում ենք հավիտենական կյանքը: «Ով որ Որդուն ունի, կյանք ունի, իսկ ով Աստծո Որդուն չունի, կյանք չունի» (Ա Հովհ. 5:12):

2.8 ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ (5:13-21)

Նրանք, ովքեր հավատում են Տեր Հիսուս Քրիստոսին, ովքեր սիրում են Աստծուն, պահում են Նրա պատվիրանները և սիրում են իրենց եղբայրներին, կարող են իմանալ, որ ունեն հավիտենական կյանք (Ա Հովհ. 5:13, 2:3, 10, 3:11, 4:21): Այս գիտակցությամբ նրանք համարձակությամբ կարող են Աստծուն մոտենալ, և մինչ նրանք ավելին են իմանում իրենց կյանքում Աստծո կամքի մասին, նրանց աղոթքները համապատասխանում են Նրա կամքին. նրանք կստանան այն, ինչ խնդրում են Նրանից (Ա Հովհ. 5:14-15, հմմտ. 3:21-22):

Քրիստոնյաներն Աստծո կամքի համաձայն աղոթելու զգայունության կարիք ունեն: Երբեմն քրիստոնյաները մեղքեր են գործում և այնքան են շփոթվում, որ չեն կարողանում Աստծո հետ հաղորդակցվելու ճանապարհին վերադառնալ: Այդպիսի մեղքերի օրինակներ կարող ենք գտնել Եբր. 6:4-6, 10:26-27, 12:16-17-ում և Ա Կորնթ. 11:29-30-ում: Հովհաննեսը նկարագրում է այդ մեղքերը որպես մահվան առաջնորդող մեղքեր և պատվիրում է մեզ չաղոթել այդ մեղքերը գործողների համար (Ա Հովհ. 5:16):

(Շարունակելի)

Մենք մենակ չենք

Մատթեոս 4:1-11

Մարդիկ միշտ զարմացել են չարի և բարու անտեսանելի, գերբնական էակների մասին պատմություններ լսելիս: Ոմանք ասում են, թե իրենք մեռած մարդկանց հոգիների հետ կապ հաստատող անձնական «ուղեկցորդներ» կամ «խտրովակներ» ունեն: Նոր դարի «անտեսանելի ընկերների» վրա ուշադրություն բևեռելն ամենուրեք տարածված աշխարհայացքի մի մասն է կազմում: Կախարդության տարբեր տեսակները, վերամարմնավորումն ու աստղագուշակությունը հեղեղել են այսօրվա շուկան և հարգանքի արժանացել: Այդ գաղափարները մուտք են գործել մաս դպրոցներ:

Թեև նոր դարի «դավադրության» մասին խոսելու ամուր հիմքեր չունենք, սակայն պետք է ընդունենք, որ այսօր հազարավոր մարդիկ հայտարարում են, որ հիպնոսի և մտքերը փոխող նյութերի միջոցով կարողացել են շոշափելի կերպով հաղորդ դառնալ ոգեղեն էակների:

Աստվածաշնչի հեղինակությանը հավատացող մարդիկ չպետք է այսպիսի բաներից զարմանան: Սկզբից մինչև վերջ Աստվածաշունչը նկարագրում է աներևույթ հոգիների գործունեությունը, որոնք վաղուց կապ ունեն մարդկության հետ: Սակայն Աստվածաշունչը հստակ ասում է նաև, որ հրեշտակների թեման պետք է զգուշությամբ ու շրջահայացությամբ շոշափել: Հոգիների աներևույթ աշխարհը կարող է լինել կա՛մ վնասակար, կա՛մ օգտակար հետևաբար չպետք է պարզապես հետաքրքրասեր լինել, այլ այն դիտել որպես անտեսանելի աշխարհ, որից սովորելու շատ բան ունենք: Ի՞նչ կարող ենք սովորել հրեշտակներից:

Մենք մենակ չենք

Աստվածաշունչը հստակ ասում է, որ այս տիեզերքում միայն մարդիկ չէ, որ բանական ու բարոյական արարածներ են: «Հրեշտակ» և «հրեշտակներ» բառերը 300 անգամ հիշատակվում են Աստվածա-

շնչում: Աստվածաշունչը հաճախ է խոսում նաև սատանայի ու դևերի մասին՝ նրանց համարելով իրական արարածներ, որոնք պարզապես մեզ նման միս ու արյուն չունեն (Եփես. 6:12):

Մեզ օգնում են անտեսանելի ընկերները

Աստվածաշունչն ասում է, որ կան մեզ օգնող հրեշտակներ: Նրանք մեր անտեսանելի բարեկամներն են. «Չէ՞ որ ամենքը սպասավոր հոգիներ են ուղարկված, սպասավորություն անելու նրանց համար, որ փրկությունը պետք է ժառանգեն» (Եբր. 1:14):

Հրեշտակները սովորաբար անտեսանելի են, որովհետև հոգիներ են և կարողանում են ոգեղեն աշխարհից արագ տեղափոխվել մեր ֆիզիկական աշխարհը՝ մեզ օգնելու համար:

Անտեսանելի թշնամիները հակառակվում են մեզ

Աստվածաշունչը սերտելիս հայտնաբերում ենք, որ ոգեղեն աշխարհում թշնամիներ ունենք: Չար հոգիների մի մեծ խումբ ասում է Աստծուն: Այդ ատելությունը դևերին մղում է ամեն գնով խափանելու մարդկության համար Աստծո ունեցած ծրագրերը: Աստվածաշունչը սատանային անվանում է մեր թշնամին (Ա Պետ. 5:8, Մատթ. 13:39) և նրա հետևորդներին նկարագրում է որպես կազմակերպված ու հզոր բանակ: Այդ դևերը՝

- հակառակվում են Աստծուն և Նրա ժողովրդին,
- մեղադրում են Աստծուն և Նրա ժողովրդին,
- խաբում են չփրկվածներին ու փորձում են խաբել ճշմարիտ հավատացյալներին,
- մարդկանց մեջ չար մտքեր են սերմանում,
- ազդում են մարդկանց բնավորության վրա,
- ազդում են իշխանավորների վրա,
- փորձում են խեղաթյուրել շնորհքի վարդապետությունը,
- փորձում են աղավաղել Հիսուս Քրիստոսի մասին աստվածաշունչյան տեսանկյունը:

Երբ իմանանք, թե սատանան՝ մեր թշնամին, ինչ է ուզում անել և ինչպես է դա անում, թերևս վախենանք ու հուսահատվենք, սակայն պետք է այդ տեղեկություններն օգտագործենք լավ պաշտպանվելու և հակահարված տալու համար:

Հակոբոս առաքյալը հետևյալ ծրագիրն առաջարկեց. «Արդ հնազանդվեցե՛ք Աստծուն, հակառակ կացե՛ք սատանային, և նա կփախչի ձեզանից, մոտեցե՛ք Աստծուն, և Նա կմոտենա ձեզ» (Հակ. 4:7):

Ամփոփ ասած՝ չարին հնարավոր է հաղթել Աստծո կամքը կատարելով, խոնարհաբար Նրան հնազանդվելով և Աստծո գործությամբ սատանային դիմակայելով (Եփես. 6:11-18):

Նրանք, ովքեր հավատացել են Տեր Հիսուս Քրիստոսին և վերստին ծնունդ են ստացել, մոտենալու են «... Կենդանի Աստծո քաղաքին՝ երկնավոր Երուսաղեմին և բյուրավոր հրեշտակներին» (Եբր. 12:22):

Հիսուսն ասաց. «Այդպես էլ Աստծո հրեշտակների առաջին ուրախությունը կլինի մեկ մեղավորի համար, որ կապաշխարի» (Դուկ. 15:10):

Եթե ոգեղեն աշխարհի մասին հարցեր ունեք, մի՛ վազեք գրախանութ, պարզապես կարդացե՛ք Աստվածաշունչը:

Հովսեփ Հովսեփյան

«Ես Երկինք չեմ՝ մտնի մեծ բազմությունը քարոզելու կամ Աստվածաշունչը բազմիցս կարդալու համար: Ես Երկինք կմըտնեմ, ինչպես խաչի վրայի գողը, ով վերջին պահին ասաց. «Տե՛ր, հիշի՛ր ինձ...»»:

«Մեծագույն ժառանգությունը, որ մեկը կարող է փոխանցել իր զավակներին եւ թոռնիկներին, գումար կամ այլ նյութական բաները չեն, որոնք կուտակել է կյանքի ընթացքում, այլ հավատքի եւ բնավորության ժառանգությունը»:

Բիլլի Գրեհեմ

Աճել և զարգանալ մեր կյանքում և ծառայության մեջ

Կարևոր դաս մանուկների և պատանիների հետ աշխատողների համար:

Նույնիսկ երկար տարիների փորձ ունենալով և այս գործի մեջ հմտանալով՝ պետք է շարունակենք շարժվել, զարգանալ և աճել, եթե կարիք կա՝ նաև փոխվել: Բոլորս շարունակաբար կարիք ունենք քննելու ինքներս մեզ, մեր կյանքը և ծառայությունը:

Սա սուրբգրային է:

«Դուք ձեզ քննեցե՛ք, թե արդյո՞ք հավատի մեջ եք, փորձեցե՛ք ձեր անձերը: Դուք ինքներդ ձեզ չգիտե՞ք, թե Հիսուս Քրիստոսը ձեր մեջ է» (Բ Կորնթ. 13:5, ընթերցե՛ք նաև Ա Կորնթ. 3:13-15, Սաղ. 139):

Մենք ուզում ենք, որ մեր աշխատանքը լինի լավ և արդյունավետ: Իմանալու համար, թե որքանով է այն լավ, պետք է զգուշորեն և մանրամասն քննել Սուրբ Գրքի լույսի տակ: Մի՛ վախեցի՛ր սա անելուց, հետևանքներն օգտակար են քո աշխատանքի արդյունավետության համար: Վտանգավոր է, երբ դառնում ենք ինքնաբավ և կարծում ենք, որ ավելի լավ չէինք կարող անել:

Զննելով մեր գործը՝ երկու բան է պատահում.

1. Համոզվում ես, որ այն, ինչ անում ես, ճիշտ է և կարիք ունի աճելու և զարգանալու,
2. Տեսնում ես, թե ինչ փոփոխություններ են անհրաժեշտ:

Դու ուզո՞ւմ ես փոխվել

Պետք է կամենաս փոխվել: Անհատապես քեզ համար կարող է դրժվար լինի փոխվելը: Ավելի դժվար է փոփոխություններն այն անձանց համար, ովքեր հոգևորապես բավականին հասուն են և օրհնված: Որքան շատ ենք աճում, այնքան ավելի դժվար է դառնում փոխվելը:

Հաճախ խնդիրն այն է, որ շատ ենք զբաղված լինում աշխատանքով և ժամանակ չենք ունենում ինքներս մեզ, նաև մեր աշխատանքը քննելու: Հաճախ հին ձևով ենք շարունակում ոչ թե որ դրանք լավն են կամ վատ լինելու համար, այլ պարզապես ժամանակ չենք տրամադրում այլ հնարավորություններ փնտրելու համար:

Բայց պետք է զգույշ լինել. փոփոխություն պետք է, երբ իսկապես կա դրա անհրաժեշտությունը, և կա մի ավելի լավ բան, որը կդրվի այն բանի փոխարեն, ինչը պետք է փոխել: Պետք է իսկապես կամենալ փոխել, նաև չվախենալ մարդկանց տեղյակ պահելուց այն մասին, թե ինչ են արել և ինչու են արել:

Փոփոխությունը հաճախ դժվար է

Փոփոխությունը հաճախ բերում է քննադատություն:

Փոփոխությունը հաճախ չհասկացված լինել է առաջացնում:

- Պետք է վստահ լինես, որ փոփոխությունն անհրաժեշտ է:
- Պետք է վստահ լինես, որ փոփոխությունը համապատասխանում է Սուրբ Գրքին:
- Պետք է վստահ լինես, որ փոփոխությունն արվում է ճիշտ ձևով՝ թափանցիկ, ուղիղ հոգով, ուրիշերի հետ խորհրդակցելով:
- Պետք է փոփոխություն անես դանդաղորեն, աղոթքով, քայլ առ քայլ: Անհրաժեշտ է համբերություն: Փոփոխությունն ակնթարթորեն տեղի չի ունենում:
- Պետք է վստահ լինես, որ չես առաջացնում վակուում: Դա նշանակում է՝ չպետք է անես փոփոխություն, մինչև չգտնես այլընտրանք, որն ավելի լավ է նախորդից:

Շնորհակալ եղիր, որ Աստված կանչել է քեզ տղաների և աղջիկների ծառայության մեջ: Եվ հետամո՞ւտ եղիր ա՛յն ուրախությանը, որը Տերը քեզ տալու է, երբ հնազանդվես Տիրոջը և Ավետարանը հասցնես երեխաներին և պատանիներին և նրանց ում Տերը ցույց կտա:

Մանկանց ավետարանչության ընկերակցություն

Ստեղծված ենք Նրա հաճության համար (2)

«Որովհետև մենք Նրա ձեռքի գործն ենք, Քրիստոս Հիսուսով բարի գործերի համար ստեղծված, որոնց Աստված նախապես պատրաստեց, որ նրանց մեջ քայլենք» (Եփես. 2:10):

Նախորդ հոդվածում տեսանք, որ Աստվածաշունչը շատ հստակ է խոսում ստեղծագործության նպատակի մասին: Աստված Իր ամբողջ ստեղծագործությունը արեց Իր հաճության համար (Հայտ. 4:11): Աստծուն հաճելի է Իր ստեղծագործությունը, այո՛, նաև Իր ստեղծած բնությունը: Սաղմոս 19-ում ասվում է, որ երկինքը Աստծո փառքն է պատմում: Այսպիսով, Աստծուն հաճելի է Իր ստեղծագործությունը, քանի որ բնությունը հռչակում է Իր փառքը: Մենք տեսանք, որ Աստված նաև մարդուն ստեղծեց Իր հաճության համար:

Չնայած որ մարդը ստեղծված է Աստծո հաճության համար, մեղանչելով նա զրկվեց Աստծո փառքից (Հռոմ. 3:23): Աստծուն հաճելի չէ մարդու մեղավոր և ընկած վիճակը: Այդ պատճառով Հիսուսը Նիկողեմնոսին ասաց, թե պետք է վերստին ծնվել (Հովհ. 3:3): Սա նշանակում է, որ հոգևորապես ընկած վիճակում գտնվող մարդը պետք է Հիսուսի միջոցով նոր արարած դառնա: Աստված ինչ-որ ձևով ընկած մարդու մեջ, ով մեղքի պատճառով հոգևորապես կործանված, Աստծո փառքից զրկված և այլևս Աստծո հաճությունը նրա վրա չէ, պետք է նոր մարդ ստեղծի:

Այս նոր ստեղծագործությունը, վերստին ծնունդը հնարավոր է միայն Հիսուս Քրիստոսի միջոցով: Դա պատահում է այն ժամանակ, երբ անձը գիտակցում է իր մեղավորությունը և հավատում Քրիստոսին: Այդ ժամանակ մարդը Քրիստոս Հիսուսով վերստին ստեղծվում է ոչ միայն Աստծո հաճությունը վայելելու համար, այլև բարի գործեր անելու (Եփես. 2:10):

Ուշադրություն դարձրեք համարում ասվում է, որ մենք ստեղծված ենք Քրիստոս Հիսուսով: Հիշենք, որ ամեն բան ստեղծվեց Հիսուսի հա-

մար և Նրա միջոցով (Հովհ. 1:1-3, Կող. 1:16): Ակնհայտ է, որ ստեղծագործությունը Հիսուսի միջոցով եղավ, Աստծո Խոսքով (Ծննդ. 1:3, 6 և այլն):

Այնուամենայնիվ, վերստին ծնունդ ունենալուց, Հիսուս Քրիստոսով ստեղծվելուց հետո ավելի հաստուկ նպատակ է նշմարվում հորիզոնի վրա: Երբ ես և դու հավատանք Հիսուսին և սկսենք ճանաչել Նրան, Աստվածաշունչն ասում է, որ նոր և հատուկ նպատակ կունենանք, որի համար ստեղծված էինք՝ բարի գործեր անելու:

Հստակեցնելու համար նշենք, որ մենք բարի գործերով չենք փրկվում, այլ փրկվում ենք բարի գործեր կատարելու համար: Հետևաբար՝ Քրիստոս Հիսուսով նոր ստեղծված անձը (վերստին ծնված, փրկվածը) բարի գործեր կունենա իր կյանքում:

Նախ պետք է գիտակցենք, որ բարի գործերը սեփական ուժով չենք կարող իրագործել: Իրականում, Աստված չի հաճնում մեր կատարած գործերով, քանի որ նույնիսկ մեր լավագույն գործերը հաճելի չեն Նրան (Եսայի 64:6): Մենք պետք է քայլենք բարի գործերի ճանապարհով, որն Աստված Ինքն է նախատեսել մեզ համար: Այլ խոսքով՝ երբ Աստված Քրիստոս Հիսուսով նորից ստեղծեց մեզ, Նա մաս մեզ դրեց այն ճանապարհի վրա, որը նախատեսել էր մեզ համար, որպեսզի դրանով քայլենք: Հետևաբար, մեր գործը պետք է լինի Նրան հնազանդվելը և մեզ համար Իր նախատեսած բարի գործերի ճանապարհով ընթանալը: Մինչ շարունակենք քայլել բարի գործերի ճանապարհով (Աստվածաշնչին հնազանդվելով), որի համար ստեղծված էինք, Աստված կհսկի և կօգնի մեզ այն կատարելու և ավարտին հասցնելու մեջ (Փիլ. 1:6-ում):

Աստված մեզ չփրկեց պարզապես դժոխքից ազատելու համար. Նա փրկեց մեզ, որպեսզի բարի գործեր կատարենք.

- Մեղքի պատճառով Աստծո պատկերը մեր մեջ աղավաղվեց: Աստված, մեզ վերադարձնելով, մեր մեջ վերականգնեց Իր պատկերը: Հետևաբար, մենք աշխարհում պետք է արտացոլենք Նրա բնավորությունը և բարությունը (Մատթ. 5:16, Հռոմ. 13:14, Եփես. 4:24):

- Գարձյալ Աստվածաշունչը սովորեցնում է, որ Հիսուսը Որթն է և մենք Նրա ճյուղերն ենք (Հովհ. 15:5): Հետևաբար, Տերը, մեր մեջ գործելով, բարի գործեր պիտի արտադրի: Աստվածաշունչն այն կոչում է Հոգու պտուղ (Մուրք Հոգին ունենալու արդյունքը, փրկված անձնավորություն լինելու արդյունքը, Գաղ. 5:22-23):
- Բարի գործերը գործողությունների ցանկ չեն, որ պետք է կատարենք: Ես չեմ նսեմացնում այն բաները, որոնք հաճախ դիտվում են որպես բարի գործեր, ինչպիսին են աղոթելը, եկեղեցի հաճախելը, տասանորդ տալը, ծառայության մեջ ներգրավվելը, աղքատների մասին հոգալը, դրացուն սիրելը և այլն... Այնուամենայնիվ, այն ավելի է, քան պարզապես որոշ գործողությունների ցանկին հետևելը: Բարի գործեր անելը ցանկի հետևել չէ, այլ ապրելակերպ է: Պողոսը չգրեց մեզ, որպեսզի ինչ-որ ցանկի հետևենք, այլ ապրելակերպ որդեգրենք, որն Աստված ուզում է ունենանք և դրանով ընթանանք (Հռոմ. 12:1):
- Վերջապես, Աստծո ուզած բարի գործերի ճամփան փոխված կյանքն է՝ Աստվածային կենսակերպ. ոչ թե նախքան վերստին ծնվելն ապրած կենսակերպ, այլ Հիսուսով ծնունդ ստացած նոր կյանք, որի մեջ արտացոլվում է Աստծո պատկերը: Անհնար է՝ մեկը փրկվի, և նրա կյանքը չփոխվի: Աստված փոխում է մարդկանց Իր նպատակների համար, այսինքն՝ աշխարհում Իր բնավորությունը և բարությունը արտացոլելու համար (Հակ. 2:26): Հետևաբար, եթե անձը չունի փոխված կյանք, և նրա կյանքը շարունակաբար չի աճում, ապա նա Քրիստոսի մեջ հաստատված չէ: Այնուամենայնիվ, եթե անձն ապրում է փոխված կյանքով, և այդ կյանքը հետզհետե աճում է, ապա նա հաստատված է Քրիստոսի մեջ, և աճը շուտով ակնհայտ կդառնա (Հովհ. 15:4, Ա Տիմ. 4:15):

Արդյոք հաստատվա՞ծ ես Որթի վրա: Ապա արդյոք հիմնվա՞ծ ես Հիսուսի վրա, արդյոք փրկվա՞ծ ես բարի գործերի համար: Եթե այո, ապա քո ապրելակերպը պետք է արտացոլի քո հավատքը:

Բաֆֆի Չափարյան

Ֆինանսական շիտակություն

«Որովհետև դրամի սերը բոլոր չարիքների արմատն է, որին տրվելով ոմանք հավատից մոլորվեցին և իրենք իրենց շատ ցավերով խոցեցին» (Ա Տիմ. 6:10):

Շիտակության սահմանում

Բառարանը «շիտակությունը» սահմանում է որպես բնավորության ազնվություն:

Շիտակությունը կապված է անկեղծության հետ

Շիտակ մարդիկ երկերեսանի չեն: Նրանց հետ հարաբերություններում ստանում ես այն, ինչ տեսնում ես: Նման մարդկանց շարժառիթները քողարկված ծրագրերը չեն:

Շիտակությունը կապված է քաջության հետ

Շիտակ մարդիկ քաջություն ունեն պաշտպանելու իրենց համոզմունքները: Նրանք պատրաստ են գին վճարել իրենց սկզբունքների համար:

Քրիստոնեական շիտակությունը ներառում է Աստվածաշնչի ճշմարտությունների համաձայն գործելը:

Քրիստոնյաները ոչ միայն պետք է հետևողական լինեն, այլև հետևողականորեն ապրեն աստվածաշնչյան բարքերով:

Շիտակության հիմքն Աստծո մոտ է

Շիտակության Աստծո չափանիշն արտացոլում է Նրա բնույթը: Քրիստոնեական շիտակությունը ներառում է այնպիսի ապրելակերպ, որ մեր կյանքն Աստծո բնույթի հայելին լինի: Շիտակ մարդկանց վարքագիծը ցույց է տալիս, թե ինչպիսին է Աստված:

Փողն ամեն չարիքի արմատն է:

Աստվածաշունչն ասում է. «Դրամի սերը բոլոր չարիքների արմատն է, որին տրվելով ոմանք հավատից մոլորվեցին և իրենք իրենց

շատ ցավերով խոցեցին» (Ա Տիմ. 6:10): Փողասիրությունը չարիքի արմատ է, քանզի ոմանք փողն ավելի են սիրում, քան Աստծուն: Հիսուսն ասաց, որ մարդը չի կարող և՛ Աստծուն ծառայել, և՛ մամոնային (հարստության կեղծ աստվածը) (Մատթ. 6:24):

Փողի օգտագործումը կարող է շատ պատեհ լինել: Այն կարելի է օգտագործել որբանոցներ, հիվանդանոցներ ու դպրոցներ կառուցելու, չքավորներին կերակրելու, Ավետարանը քարոզելու, արդարության մեջ մարդկանց կրթելու, եկեղեցիներ հիմնելու և Խոսքը հռչակելու համար: Փող է անհրաժեշտ Աստվածաշնչեր, քրիստոնեական գրականություն տպագրելու և ավետարանական ժողովներին աջակցելու համար: Փողի նման կիրառության դեպքում, ոչ մի արմատական սրխալ չկա:

Հիմնահարցն այն է, թե փողն ինչպես է ձեռք բերվում և ինչի համար օգտագործվում: Արդյոք դա քրտնաջան աշխատանքով է վաստակվում: Արդյոք դա Աստծո՞ փառքի, թե՞ մեր սեփական հաճույքների համար է օգտագործվում: Արդյոք դա օգտագործվում է մեր հպարտությունը սնելու՞, թե՞ վեհ նպատակի համար:

Փողը՝ որպես այդպիսին, ամեն չարիքի արմատը չէ: Այս արմատը մեր սրտերում է: Փողասիրությունը բազում չարիքների արմատ է:

Մենք պետք է թույլ տանք, որ Աստված վերահսկի մեր գրպաններն ու բանկային հաշիվները:

Դոկտ. Չեյլով Բասսարա

«Քեզանից երկու բան եմ խնդրում, մեռնելուցս առաջ մի՛ մերժեր դրանք: Հեռացրո՛ւ ինձնից ունայնությունն ու ստերը, ինձ ո՛չ աղքատություն, ո՛չ էլ հարստություն տուր, կերակրի՛ր ինձ իմ բաժին հացով, որ չլինի թե կշտանամ և ուրանամ Քեզ ու ասեմ. «ՏԵՐԸ ո՞վ է», կամ աղքատանամ ու գողություն անեմ և իմ Աստծո անունը զուր տեղը բերանս առնեմ» (Առակ. 30:7-9):

Տե՛ս՝ որքան շատ քեզ սիրեցի

1. Տե՛ս՝ որքան շատ քեզ սիրեցի,
Որ Երկնքից ուղարկվեցի,
Իջա գահից աստվածային,
Հագա քեզ պես տկար մարմին:
Պալատի մեջ արքայական,
Ես չծնա իբրև իշխան,
Մտորը եղավ ինձ օրորոց,
Չոր խանձարուրը մարմնիս
ծածկոց:
2. Տե՛ս՝ որքան շատ քեզ սիրեցի,
Այսպես խոնարհ եկա քեզ մոտ,
Եղբայրդ եղա արյունակից,
Տկարությանդ՝ հաղորդակից,
Ե՛ս՝, Երկնքի հզոր Արքան,
Հագա պատկեր ծառայական,
Օրենքի տակ մտա հոժար,
Որ քեզ անեմ ազատ, արդար:
3. Տե՛ս՝ որքան շատ քեզ սիրեցի,
Որ անդադար երեք տարի
Ծով, անապատ, լեռ չափեցի,
Կենաց խոսքերը քեզ պատմեցի,
Շրջում էի օր ու գիշեր,
Հանգստություն չեմ իմացել:
Նինջ առնելու, հացի անգամ
Չէի գտնում խաղաղ մի ժամ:
4. Տե՛ս՝ որքան շատ քեզ սիրեցի,
Հառաչանքներդ սիրտս այրեցին,
Ու ձայնեցի գորովագին.
«Եկե՛ք Ինձ մոտ հոգնած սրտեր,
Ես կսփոփեմ վշտերը ձեր»:
5. Տե՛ս՝ որքան շատ քեզ սիրեցի,
Հիշի՛ր տխուր Գեթսեմանին.
Այն ահավոր մռայլ գիշեր,
Խոր տագնապի երկունք ժամեր,
Երբ ահռելի բռնից ընկճված,
Քրտնաշաղախ գետնին ընկած,
Քամում էի մինչև հատակ
Ծով մեղքերիդ դառը բաժակ:
6. Տե՛ս՝ որքան շատ քեզ սիրեցի,
Տե՛ս՝ ուր հասա, ինչ վիճակի.
Շղթայակիր իբր ավազակ,
Ամբոխի մեջ ընկած մենակ,
Մտրակներից արյունվա,
Փշից պսակ ճակտիս վրա,
Ամեն կողմից ծաղր ու ապտակ,
Թուք, նախատինք ու աղաղակ:
7. Տե՛ս՝ որքան շատ քեզ սիրեցի,
Ե՛լ Գողգոթա, նայի՛ր, նայի՛ր,
Նայի՛ր ու թող սիրտդ հալչի
Այս պատկերից կսկծալի.
Փրկիչդ՝ մերկ, բազկատարած,
Անարգալից ու խոշտանգված,
Խաչափայտի վրա գամված,
Մահվան ընկեր ավազակաց:

8. Աչքերս ցավից խոր են ընկել,
Պապակ լեզուս՝ քիմքիս կպել:
Խնդում էին տառապանքիս,
Ծարավ էի՝ լեղի տվին,
Աստծո Սուրբ Գառն է մորթվել,
Տե՛ս՝, արևը սուգ է հագել,
Այս ինչ վիճակ զարհուրելի,
«Էլի՛ լամա սաբաքթանի»:

9. Ու խաչի վրա իբր ողջակեզ
Մեռա, բայց սիրեցի Ես քեզ,
Մեռա սուգով, արյան փառքով,
Քեզ փրկեցի կյանքիս գնով:
Դու մերթ կորած ոչխար էիր,
Գերի դարձած, մեղքին ընկեր,
Քեզ դուրս բերի մահվան գուրից,
Ազատեցի գայլ վիշապից:

10. Հիմա լսի՛ր, դու, ո՛վ չար սիրտ,
Եկել եմ քեզ տալու հանգիստ,
Եկեղեցիք ինձ թողեցին,
Մերս ու արյունս անարգեցին:
Այժմ արցունքով քեզ կսպասեմ,
Բա՛ց դուռդ Ինձ, որ ներս մտնեմ,
Տե՛ս, վիրավոր Փրկիչդ եմ Ես,
Որ այսքան շատ սիրեցի քեզ:

Հեղինակն՝ անհայտ